

Վ. ԹԵՐՅԱՆՆԵՍ

ԵԼ ՎԱՀԻԴԻ

ՎԵՐՋԻՆ ԱՐԿԱԾՈՒ

Պատմանք



Պ.Տ.ՏՐԱՆ 1938 ՅԵՐԵՎԱՆ

891.99
Բ-52

39 NOV 2011

Վ. ԹԵՐՁԻՒՄԱՅԱՆ

891.995 ԿՐ
P-52

ԵԼ ՎԱՐԴԻԴԻ ՎԵՐԶԻՆ ԱՐԿԱԾԸ

ՊԱՏՄՎԱԾՔ

— —

ՊԵՏՐՈՍ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿՈՎԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1988

I

ԳԻՇԵՐԱՑԻՆ ԱՐԿԱԾ ԲԱԲԵԼՈՆԻ ԱՎԵՐԱԿՆԵՐՈՒՄ

Ծեր և միաչքանի Մուհիդը, վորին Ել-Վահիդ մականումն եյին տվել («Վահիդ» արարերեն նշանակում և մեկ), Բազգաւուն շրջակալքում ուղտապան եր, ուներ միայն մեկ ուզտ, նրա վողջ կարավանը, այն ել ծեր և միաչքանի, ինչպես իր տերը:

Ուզտն իր ստափառով վաստակում եր յերկուսի ապրուստը — թեթև բեռներ և անցորդներ փոխադրելով, իսկ ուղտապանը աչքի լույսի պես սիրում և խնամում եր նրան:

Մի տնդամ, գործի բերմամբ, Վահիդը և իր ուզտը, Հետեվելով Յեփրատ գետի հոսանքին, գնացին դեպի Հարավ: Դիշերը հասան հին Բաբելոնի¹⁾ ավերակներին, վորոնցից քիչ հեռու գտնվում եր մի գյուղաքաղաք: Վահիդը նախընտրեց գիշերել ավերակների մեջ, վորովհետեւ գրանով կազմավեր քարվանսարայի ավելորդ ծախսերից:

Մի քիչ վորոնելուց հետո գտավ մի հարմար անկյուն, պատսպարված կիսափուլ պատով — զուցելու կալեկան²⁾ պալատի, տաճարի կամ բաղնիքի վերջին բեկորը, և ազատելով ուզտի սապատը թեթև բեռից՝ մեջքի վրա պառկեց նրա կողքին և սկսեց դիտել աստղավառ յերկինքը:

1) Բաբելոն — հնագարյան քաղաք Միջագետքում, այժմ մնացել են միայն ավերակները Բաղգաղից մոտ 60 կիլոմետր հոսու:

2) Բաբելոնը հին զարելում յեղել և նաև խալդեյացիների մայրաքաղաք:



1007
38

Գիշերը հարավի պարծանքն է: Ցերեկվա տոթին՝
դանդաղ տողանցող կարավանները չափած, միալար
քայլերով՝ անազատների հրայրքի մեջ յերազում են
սփոփիչ գիշերը:

Վահիդը՝ վորապես ճշմարիտ հարավցի՝ զբում եր
գիշերվա ամբողջ հմայքը: Նրա հողին լցվեց յերա-
նությամբ և անդիտակցարար սկսեց հնչեցնել, կոկոր-
դային խռպոտ ձայնով, գիշերվա յերգը, ավելի ճիշտ՝
մի հանգերգ, յերկար ու միալար:

— Յա լե՛յլ, յա լե՛յլ, յա լե՛յլ (ո՞վ գիշեր, ո՞վ
գիշեր...):

Գիշերվա գովքն ե սա, նույն հանգերգը, վոր կը-
կնվում և Միջազետքից և Պարսից ծոցից սկսած մինչև
արարական մեծ տափաստանը և հյուսիսային Աֆրի-
կայի անտապատները:

Մինչ տերը յերգում եր, ուզուը արթուն վորոնում
եր: Յերբ Վահիդը հոգնեց յերդելուց՝ դարձավ զեպի
ուղար և սկսեց խոսել նրա հետ: Արդին (այդպես եր
ուղարի անունը) լսում եր տիրոջ խոսքերը, գոնե այդ-
պես եր թվում, և վորոնալու հետ միասին մերթ ընթ
մերթ գլուխը շարժում, կարծես հավանության նշան-
ներ անելով: Վահիդը սիրում եր յերկարորեն խոսել
ուղարի հետ, հայտնելով նրան իր մտքերը և ոզաց-
մունքները, վարդելով նրան հետ վորպես բանական ա-
րարածի, վորովհետեւ աշխարհիս վրա նրանից զատ ու-
րիշ բարեկամ չուներ:

Գիշերը սկսեց ցրտել. Վահիդը փաթաթվեց իր ա-
րայի մեջ և պատրաստվեց քննչու:

— Քնի՛ք գու ել, սիրելիս, — ասաց նա ուզարին, —
վաղը յերկար ճամբար ունենք կտրելու, լուսաբացից
առաջ շարժվելու յենք: — Հետո ավելացրեց. — Այսակ զ
աղահով ե, վոչ վոք չի հանդոնի գիշերով մուտքալ
այս ավերակներին ուրվականների ահից. մենք ուցիւ,
մենք չենք վախենում, այնպես չե՞ Արդի:

Քիչ անց Վահիդը սկսեց մեղմորեն խռմիտ. ուզուը
մնաց արթուն և կարծես տիրեց. նայում եր նո քննծ-
տիրոջը և գլուխն որորում:



Վահիդի քունը յերկար չտելեց. Հանկարծ զարթ-նեց և նայելով չուրջը՝ ասաց.

— Դեռ քնած չես, իմ խեղճ Արդի... Վաս յերազ տեսա. ինչ-վոր անզգամներ յեկել եյին, ուզում եյին քեզ տանել: Մարգարեյի միրուքը վկա, յերազը լավ յերազ չեր:

Նորից քնեց: Այս անդամ, թվում եր, նրա քունը ավելի խաղաղ եր, չնշառությունը կանոնավոր, իսկ դեմքի վրա յերեսում եր պայծառ ժպիտ. ակներեն եր, վոր վատ յերազներ այլևս չեյին խռովում նրա նիրհը:

Սակայն այս անդամն ել քունը յերկար չտելեց: Վահիդը զարթնեց և աչքերը տրոբելով ասաց.

— Ալլահ, ալլահ, սա ի՞նչ ե, դարձյալ վատ յերազ տեսա...

— Սալամ ալե՛յքում:

— Սալամ ալե՛յքում:

— Սալամ ալե՛յքում:

Յերեք վողջույններ լսվեցին 'խավարի մեջ, և Վահիդը խոսքը կիսատ թողած՝ ժամանակ չունեցավ անմիջապես արտասանելու սովորական պատասխանը՝ «ալե՛յքում սալամ»:

Յերեք սպիտակ բուրնուզներ¹⁾ առաջացան խավարի մեջ — յերեք մարդկային եյակներ և կանգնեցին մի շարքի վրա:

Վահիդը նախ կարծեց, վոր յերազի շարունակությունն ե, սակայն ստուզեց իրողությունը՝ շոշափելով իր միրուքը և դեռ վորոճացող ուղտի դունչը: Հետո ճշմարիտ արևելցու անխոռվ ձայնով ասաց.

— Յեթե այս հեթանոս քաղաքի փլատակներում թափառող ջիներից²⁾ չեք, թող ալլահը որհնե ձեր դալուսոր:

— Մենք ջիներ չենք, այլ քեզ պես ուղղափառ մուսուլմանները, — պատասխանեց յերեք ստվերներից

1) Սպիտակ քաթանե յերկար հաղուստ, վոր սովորաբար ունենում ենի դիմանոց բաղկառութի նման, դորձ են ածում արաբները:

2) Զար վազի:

ամենաբարձրը խռով, կոկորդային ձայնով, և յերկուդածությամբ մրմնջաց մահմեղական աղոթքի սովորական խոսքերն արաբերեն:

Մյուսներն ել քթի տակ աղոթք մրթմբթացին և չոյեցին իրենց միրուֆները: Վահիդը հետեւ նրանց որինակին, մեքենայորեն կրկնելով նույն խոսքերը:

Այս խոսքերից հետո անծանօթ հյուրերը Վահիդի հրավերով նստեցին կիսափուլ պատի տակ և բավական ժամանակ լուր մնացին:

— Ո՞վ մուսուլման, իմացիր, վոր մենք թափառական գերվիշներ ենք, այս անդամ գալիս ենք ուղիղ Մեքքեյից¹⁾, ուր գնացել եյինք կատարելու նվիրական ուխտագնացություն մեծ մարգարեյի²⁾ գերեզմանին:

Խոսողը նույն կոկորդային ձայնն եր:

— Թորդ ընդունելի լինի ձեր նվիրական ուխտը:

Հոռոթյուն:

Լոգում եր միայն ուղտի ատամների կրծառցը. նա յարունակում եր վորոճալ:

Վահիդը չեր հանդինում խղել խորհրդավոր լուռթյունը. նա մտածում եր: Անծանօթ դերվիշի ճուռ բավական ոտարոտի յեր հնչում գիշերվա այն ժամին Բարեկարնի ամայի փլատակներում: «Հասել է փրկության ժամը» հայտարարում ե նա, իսկ Վահիդը ամենին վստահ չե, վոր այդ այդպես ե, և հետո իրեն ի՞նչ...

Հանկարծ կոկորդային ձայնը հայտարարեց.

— Դեռ աստղերը չգժգունած՝ ճանապարհ ենք բնինելու գեպի Մուսուլ...

Յերվիշները խավարի մեջ կայծկլտող աչքերով նայում եյին վորոճացող ուղտին:

— Յերեսում ե, ազնիվ ցեղից ե որհնյալ կենդանին, անկառած սահարական³⁾ արագընթաց ցեղից, — սաւաց նբանցից մեկը:

1) Մեքքե կամ Մեկկա. քաղաք Արաբիայում:

2) Մահմեդ:

3) Սահարա — մեծ անապատ Հյուսիսային Աֆրիկայում:

Վահիդը չպատասխանեց. մի անորոշ կասկած սկսել եր կը ծեղան նրա սիրուը, բայց զերվիչների պատկառելի տեսքը և նրանց առաջնորդի նույն քան պատկառելի և բարեկաչտ խոսքերը մեղմացնում եյին կասկածի իտայթը:

— Թող ալլահը հովանավորե ձեզ և հաջողությամբ պատկե ձեր առաքելությունը, ովք սուրբ հայրեր, իսկ այժմ, կարծում եմ, վոր սփոփիչ քունը անհրաժեշտ է ձեր հոգնած անդամների ուժը նորոգելու համար, քանի վոր վճռել եք դեռ լույսը չբացված ճանապարհները:

Այսպես խոսեց Վահիդը և տիրությամբ նայեց իր սիրեցյալ ուղտին, վորը դեռ վորոճում եր:

— Ճշմարիտ ե, ովք բարի մուսուլման, հանդստյան մեծ կարիք ունենք, վորակեսզի նորոգված ուժերով քարոզենք մարդարեյի խոսքը:

— Շատ գժվար ե հետիոտնի բանը. դու յերջանիկ ես, ովք մուսուլման, վոր ունիս այդ որհնված ցեղի կենդանին, վորի սապատն այնքա՞ն հանդստավետ ե...

— Ալլահը վկա, արգարե ուղտը որհնված կենդանի յե:

Այդ խոսքերից հետո յերեք գերվիչները բարի գիշեր ասացին և պառկեցին կողք-կողքի պատի տակ: Քիչ անց նրանք քննեցին, գոնե այդ եր վկայում նրանց ուսնողերից լավող համաշափ խոմ վիոցը:

Վահիդը մի քիչ միամտվեց, յերբ նրանց քնած տեսավ:

— Մարդիկ քնի մեջ ավելի անվտանգ են յերեվում, — մտածում եր նա, — յեթե շիյթանը¹⁾ մոլորեցրել ե արանց և չար մտքերը բուն են դրել սրանց հոգում, թող ալլահը փարատե այդ չար մտքերը և բարերար քունը առաքինի յերազներ բերի, վորակեսզի զարթնեն մաքուր Գողով և գնան արդարության ճանապարհով:

Վահիդի քունը փախել եր: Նա յերկար մտածեց աշխարհի բաների մասին, հիշեց իր մանկությունը,

¹⁾ Սատանա:

յերիասսարդության որերը, յերբ մեծ կարավանների հետ եր ճամբորդում, նստած իր զտարյուն «արաբը»²⁾, աչքերը սկսուած հորիզոնին, իրար հաջորդող և անհայտացող միբաժներին²⁾, վորոնց յետն թաղնված եյին հեռավոր ուղիսները: Մտքերի քմահաճ ընթացքը նրան փոխադրեց այդ ցանկալի ուղիսներից մեկը, ուր մի ժամանակ, շատ առաջ, ապրում եր այն կինը, վորին սիրել եր անչափ և կորցրել անհետ, վարպետ միքրաժ:

Սյո գիշեր անցյալի այդ տեսիլը սովորականից ավելի պայծառ եր, այնքան պայծառ, վոր մի պահ կարծեց, թե նա ներկա յե և իրական: Ահա նա, անհապատի աղջիկը, սե, այրող աչքերով, հերարձակ, ջրի մերկ կուժը կիսամերկ ուսին, աղբյուրի մոտ կանգնած դիտում ե յեկող կարավանը, վորի հետ ե և Վահիդը: Զանգակները մեղմ հնչում են, ուղիսոր լցվում ե աղմուկով: Գիշեր ե, խարույկներ են վառում: Հեռվից լովում ե չախկաների վորոնցը, մեկը յերդում ե միտրը «Յա՛, լեյլ, յա, լեյլ»...

Ուղար չարունակում եր իր վորոնը: Նա այժմ միակ արթուն արարածն եր Բարեկոնի ավերակներում, վորովհետեւ նրա տեր Մուհիդ-ել-Վահիդը նորից վորովագրվել եր յերազների աշխարհը:

Սյա անդամ Վահիդը ննջում եր խոր քնով, խոր և ճակատապրական:

Հնադարյան Բարեկոնը, ով գիտե, քանի հաբյուր գոզար անդամ ականատես յեղատվարեի ծաղման:

Սակայն այս անդամ ևս հաստատելով արեի ծաղման փաստը՝ միաժամանակ սովորված ենք հաստատել մի իրողություն, վոր կսկիծով և հուստհատությամբ համակեց Մուհիդ-ել-Վահիդի սիրուր: Բանն այն ե,

¹⁾ Արաբական ձի:

²⁾ Միրաժ տեսողական խարկանք, պատահում և սովորաբար առք յերկոներում, յերբ հետավոր տարածությունը թվում և ծածկված ջրով:

Վար յերբ վերջինս քնից զարթնեց՝ նախ նկատեց իր սիրեցյալ ուղարի քացակայությունը, ապա աչքերը շիներով — վոր ավելի պարզորեն տեսնի — տեսավ՝ վոր գիշերվայիրնք գերվիշները նույնպես անհայտացել եյին:

Վահիդը սկսեց ծեծել իր կուրծում եր իր կորուստը, անիծում խարերա դերվիշներին և մեղադրում ինքն իրեն, վոր անզգույշ ե յեղել, հավատացե, ե յերեզույթներին և թողել, վոր նենգավոր քունր փաթաթե իրեն մոռացության սավանների մեջ:

Սովորական փիլիսոփայությունը քիչ եր մնացել ամբողջապես լքեր նրան: Նա ձեռները խփում եր գլխին և մրմնջում:

«Հիմար, հիմար ծերուկ, մի՞թե դու մեղբեսելում¹⁾ որորվող աշակերտ ես, կամ փուչ մի գինեմոլ, վոր մսանում ե իր հավատը մի բաժակ գինու համար: Մի՞թե քո հայրերի իմաստությունը փախել ե քո գլխից, ինչպես անվարձ հյուրը՝ քարվանսարայից. ի՞նչպես թույլ տվիր, վոր անծանոթ մարդիկ, կասկածելի, ինչնակոչ գերվիշները ծիծաղեն քո միրուքի վրա և խլեն քո վերջին ապագենը...»

Արև գիմում եր գեպի զենիթը, բայց ավերակները շարունակում եյին մեռելային լոռություն պահպանել:

Ուղտապան Մուհիդ-ել-Վահիդը վողբում եր իր կորած ուղար, ինչպես Բարելոնն իր կորած փառքը...

II

ՅԵՐԿԱԹԵ ԹՌՉՈՒՆՅԸ

Յերբ Վահիդը հասավ մոտակա գյուղաքաղաքի դռներին, վորից նա խուսափել եր յերեկ գիշեր, նրան գիմավորեց կիսամերկ յերեխաների մի խումբ: Տեսնելով միաչքանի ծերուկին, յերեխաները, ըստ յերեռութին վորոշեցին զվարճանալ նրա հաշվին: Սուր ու այլանգակ ճիշերով վրա ընկան և մանր քարերի հետ միասին այլազան սրախոսություններ սկսեցին շպրտել նրա վրա:

1) Դպրոց, վորակ կարգավոս նատած տեղը որորվում են յետ ու առաջ:

— Սալամ-ալե՛յքում, հաջի բարա, ճշաց պղնձագույն մարմնով և արևատ դեմքով մի ստահակ, — չինէ գնում ես անհավատներին բարի գալուստ մաղթելու. զգույշ, բարա Վահիդ (ակնարկություն միաչքանիության), նրանք կծաղրեն քո միրուքը և կստիպեն քեզ պարել ուղտի պարը...

— Յերկաթարարերի վրա, — ավելացրեց մի ուրիշ ստահակ:

«Ուղտի պարը» ծակեց Վահիդի սիրտը, հիշեցնելով իր սիրեցյալ ընկերոջ. սակայն նրա համար պարզ չեր, թե խոսքը ինչ «անհավատների» մասին է. ուղեց հարցնել, բայց տեսնելով, վոր այդ չարաձճի վոհմակից խելքի մոտիկ բան չի կարելի սպասել, դավագանով սկսեց ցրել նրանց:

— Կորեք-զնացեք, — մրթմրթաց քթի տակից և, նորից հիշելով իր կորած ուղար, բարձրուծուն տասց — իմ ուղտի մեկ կույր աչքը չէի փոխի ձեր ամենքի մայրերի հետ...

Այդ րոպեյին վերեից լսեց ինչ-վոր մեքենայի խուլ աղմբուկ:

Յերեխաները հեռացան Վահիդից և սկսեցին դիտել յերկինքը՝ ձեռները ճակատներին՝ աչքերը արելից պաշտպանելու համար: Վահիդը ապշած այդ տարրորինակ աղմուկից, վոր զալիս եր յերկնակամարից և դնալով ուժեղանում, հետևեց յերեխաների որինակին. մի քիչ վորոնելուց հետո տեսավ ինչ-վոր թոշնաձեւ բան, սրացիկ մարմնով և հսկա թերերով, վոր սավառնում եր ողի մեջ վիթխարի ծիծեռնակի պես:

— Թե՛յարե, թե՛յարե¹⁾ ճշացին յերեխաները և սկսեցին վազել մեքենայի թոփչքի ուղղությամբ:

Վահիդը լսել եր սավառնակների մասին, բայց սեփական աչքով դեռ չեր տեսել:

— Ա՛յ թե՛ ինչ, — մտածեց նա, — սատանայական թռչունը իրավ վոր հրաշքի բան ե. սակայն ի՞նչ գործ ունի մեր յերկնքում: Կասկած չկա, անհավատները յե-

1) Սավառնակ — ողանակ (արար.):

կել են: Ալլա՛հ, ալլա՛հ, ո՞վ եր տեսել այսպես բան Հարուն-ել Ռաշիդ¹⁾ յերկրում: Վա՛յ քեզ, Վահիդ. ուղտվ գողացան — հերիք չե, այժմ չեյթանի սուրհանդակն ե գլխիդ պտտվում:

Մինչ սամանակը անհայտանում եր քաղաքի յետել՝ հեռվից յերեվաց խրտնած մի եւ, վոր փախչում եր գեղի դաշտը. Նրան չնչասպառ հետապնդում եր մի ծեր արար և ամբողջ ուժով գոռում:

— Բոնեցե՛ք, բոնեցե՛ք անիծածին, ով մուսուլմաններ, չե՞ք տեսնում, փախչում ե:

Դաշտում Վահիդից զատ վոչ վոք չկար, ուստի սա, կատարելով իր մարդկային պարոքը, կանգնեցրեց վաղող կենդանուն, վոր ուղիղ գալիս եր գեղի ինքը, ամուր բոնց նրա պահուրցը²⁾ և սպասեց մինչև տերը գա: Մերունի արարը մոտեցավ և նախքան չնորհակալ լինելը մատուցված ծառայության համար՝ ձեռքի գավաղանով մի քանի պատժիչ հարվածներ տեղաց խեղճ կենդանու մեջքին, ապա ճակատի քրտինքը որբելով առաց.

— Ե՛, վալլահ,³⁾ համշարի, մեծ նեղությունից աղառեցիր, եշու իր կյանքում յերբեք խրտնած չեր, պատու առաջին անգամ լինելով ինքն իրեն կորցրեց, յերբ լրսեց իր յերկար ականջներով այն դժոխային աղմուկը, վոր գալիս եր յերկնքից. տես, զեռ ականջները խլըշտում ե, սարսափը դեռ չի անցել: Ալլա՛հ, ալլա՛հ, ո՞վ եր տեսել նման դիվային թուզուն: Մարդարեյի միքուքը վկա, եշու մեղավոր չե, մարդիկ խրտնեցին, ուր մնաց անբան անասունը: Խոսքը մեր մեջ մնա, այդ ինդիֆէ⁴⁾ կոչչվածը խսկական ջանավարի⁵⁾ ե, կղնոս տչքերովիդ կտեսնեա, հրեն քաղաքումն են:

1) Հարուն-ել Ռաշիդ, Բաղդադի արտօքական պետության բադականերից ամենաշահագործ, վորի ժամանակ (763-809 թ. թ.) ը առ ավանդության դրված են յեղեւ Շահագործ և մեկ գիշերուհի հաջակավոր հեքաթները:

2) Կապ:

3) Շնորհակալ եմ (արաբ.):

4) Անդիհացի:

5) Գաղան, հրել:

Վահիդը բանից տեղյակ չեր, նա մեքենայարաք եցի վզկազը հանձնեց տիրոջը և ուշացած արձադանքի նման կրկնեց. «Ինգլի՞ո», թեթև հարցական չեշտով:

Իշապանը արգեն հեռացել եր, կարիք չզգալով նոր բացարություններ տալու, վստահ լինելով, վոր ամբողջ աշխարհին հայտնի յե արդեն, թե անդլիացիները սկսել են տիրել Միջագետքին:

Արդարե, Վահիդը, վորի միակ մտահոգությունը իր սիրելի ուղարկ եր, անհաղորդ եր իր չուրջը կատարվող անցուղարձին: Ճիշտ ե, նա լսել եր, պատերազմի մասին, վորի հեռավոր արձագանքները հնչում եյին Միջագետքի խորքերում. լսել եր նույնպես, վոր անդմացիները բասրայի կողմից առաջ են շարժվում, սակայն բնավլ լրջորեն չեր մտածել այդ մասին. չեր ել ուղում մտածել, վորովհետեւ ավելորդ եր համարում ուղեղը հոգնեցնել այն բաների մասին, վորոնք անմիջական կապ չունեյին իր կամ իր ուղտի հետ: Բացի դրանից, ունենալով յուրահատուկ փիլիսոփայություն՝ ատելով առում եր արյունահեղությունը. Վահիդը չեր կարող հասկանալ, վոր մարդիկ մի կողմ թողած խողաղ աշխատանքը՝ հանգիստ խղճով կտրում են մի մյանց կոկորդը. նրա կարծիքով արդարությունը գերիշեր եր եր մարդկային բոլոր տեսակի շահերից՝ ցեղից, հայրենիքից, ազգությունից, նույնիսկ կրոնից:

Այսպես եր ուղարական Մուհիդ-ել-Վահիդը, և ի՞նչ իմանար նա, վոր մինչդեռ ինքը գիշերը անց ե կացնում Բարելոնի ավերակներում, անգլիական առաջապահ զորամասերը զրահապատ սրբնթաց ավտոմոբիլներով հասել եյին Բաղդադի մոտերքը, և ժամ առ ժամ սպառվում եր նրանց մուտքը Հարուն-ել-Ռաշիդի մայրաքաղաքը, վոր իրաքի սիրտն ե՝ փոված Տիգրիսի շենք ափերին:

Տիուր խոհերով Վահիդը անցավ քաղաքի դարպանից և հիշեց իր կորած ուղարկ, վորի հետ միասին հաճախի անցել եր նույն դոնով, ուրախ և անհող, իմաս-

տաւն և անչար: Իսկ ա՞յժմ... այժմ նախանձում եւ քիչ առաջ հանդիպած իշապանին, այդ վողորմելի անոսնի տիրոջը. չե՞ վոր գրպանում մի կարգին եւ զնելու դրամ իսկ չուներ, իսկ ապագան մոռայլ եր և անորոշ, լի անակնկալներով և աննախընթաց դեպքերով:

Այս խոհերի մեջ՝ անցնելով ամայի փողոցներով, վահիդը աննկատելի կերպով հասավ քաղաքի փոքրիկ հրապարակը, ուր բազմությունն եր խոնվել: Հրապարակի կենտրոնում շարված եյին զրահապատ ավտոմոբիլներ, վորոնց կողքերից սպառնալից դուրս եյին ցցված գնդացիրների փողերը: Մի քանի հրացանավոր՝ կլոր գլխարկներով, լայն գոտիներով և բաց ծնկներով, անց ու դարձ եյին անում ավտոմոբիլների շուրջը, հետաքրքրությամբ նայում խոնված ամբոխին և յերեմն ձեռքի շարժումներով պահում եյին նրան հարգական հեռավորության վրա: Ոտար զինվորները խումբ-խումբ կանգնած ծխում եյին և խոսում անծանոթ լեզվով: Նրանք բոլորն ել մաքուր ածիլված եյին և ծնկները բաց: Բնիկ արաբները շրջապատել եյին նրանց և բերանաբաց գիտում եյին այդ ոտարութի մարդկանց; Վորոնց նմանը նրանք յերբեք չեյին տեսել: Անգլիացիները փորձում եյին յերբեմն խոսել արաբների հետ, ձեռներով շարժումներ եյին անում, և յերբ բան գուրս չեր գալիս, իրենց լեզվով հայհոյում եյին, ապա ծխախոտ առաջարկում նրանց, ովքեր չեյին խորշում շուայլված թունդ խոսքերից (իհարկե անհասկանալի), վորոնց հաջորդում եր անզուսպ ծիծաղ և հրհոռց անբեխանմորուք մերկասրունքների շարքերում: Զոնիների և Թումիների¹⁾ ծիծաղելի առարկան տեղացիների յերկար փեշերը և միրուքներն եյին հատկապես, ուղղակի հակատակերը իրենց կարճ շարվարների և անմաղ դեմքերի: Արաբներին այս հակապատկերը ծիծաղ չեր պատճառում, զրահապատների գլխից յերկարող դընդացիրները սառեցնում եյին նրանց տրամադրությունը,

անշում եյին ու խեղդում ծիծաղը նրանց կոկորդներում գրա փոխարեն նրանց զարմանքը փոխվում եր սարսափի, հիացումը՝ խուլ լոռության և այդ բոլորը միասին վերածվում եյին մի տեսակ հարկադրական պատկառանքի անծանոթ և ահավոր ուժի հանգեց:

Վահիդը ապշած դիտում եր այդ ոտարութի տեսարանը: Նա մի պահ մոռացել եր իր կորուստը և, նայելով հրապարակում անց ու գարձ անող զորքին, զգում եր, վոր այդ մարդիկ կատակի համար չեն յեկել, վոր խոնդիրը ավելի լուրջ ե, քան թվում ե:

Մի շատ ջահել անգլիացի զինվոր, գրեթե յերեխա, կանացի գեմքով, ժպտուն աչքերով, մոտեցավ հանկարծ վահիդին և արաբերենով ասաց.

— Չե՞ն, հեմշերի, գե՞ն...¹⁾:

Վահիդը հանկարծակի յեկավ և չպատասխանեց, թեև ասված խոսքերը անպայման պատասխան չեյին պահանջում: սակայն, տեսնելով յերիտասարդի գեմքի բարեմիտ արտահայտությունը, ակամա ժպտաց և մեքենայորեն սկսեց շոյել իր միրուքը: Անգլիացին նույնպես ձեռքը տարավ դեպի իր անմաղ ծնոտը, շփեց և ժպտալով ասաց.

— Զկա՛, միրուք չկա:

Այդ բոպեյին լսվեց մասորի աղմուկը. փոշիների միջից մոտեցավ մի ավտոմոբիլ, վորից դուրս թռավ մի բարձրահասակ, դաժան դեմքով սպա, յերկար ոձանման մտրակը ողի մեջ շարժելով:

— Մարշ, հա՛յդե, — լսվեց մի ուժեղ բաս, և յերկար մտրակը նախ սկսեց ողի մեջ շաչել, ապա թափանցեց ամբոխի մեջ, պայթեց մարդկանց գլուխների վրա, փաթաթվեց նրանց իրաններին և վոտներին և քիչ անց սրբեց ու մաքրեց հրապարակը հանդիսատես արաբներից, վորոնցից շատերը խուճապի մատնված կոխոտեցին իրար, և փախան տանելով անողոք մտրակի հետքերը իրենց մարմնի վրա և գաժան սարսափը իրենց հոգիներում:

1) Անգլիական զինվորներին արված մականուններ:

1) Լոգ և, քաղաքացի, լավ:

Փախչող ալիքը իր հետ քշեց և Վահիդին, վոր սկզբում չիմացավ, թէ ինչ պատահեց, սակայն յուրով մտրակի շաշյունը և նրան ընկերակցող խոսքերն ու իրարանցումը, հասկացավ, վոր հրամայվում և գրապարակը դատարկել: Տեսնելով իրար կոխոտող, ամբոխը և նրան տիրող խուճապը, վահիդն ավելի քան արխրեց: Նա չեր կարող բացատրել դաժան սպայի վարմունքի պատճառները, քանի վոր, իր կարծիքով, հնարավոր եր, առանց մտրակի ողնության գիմելու, հայտարել, վոր հրամարակում խոնվելը խստիվ արդելվում է: «Յերեվի ուղեց փորձել իր նոր զնած մտրակի ուժը», — մտածեց Վահիդը, կամ գուցե կարծում է, վոր մտրակի լեզուն ավելի պերճախոս է, քան սովորական մարդկային լեզուն: Լոխման Հաքիմը¹⁾ վկա, նա պրալվում է, և յեթէ նրա լեզուն իմանայի, բարձրածայն կասեցի՝ «Ո՛վ մարդ ասոծո կամ սատանայի, յեթեղու կարծում ես, վոր արարներին ծեծելով կատարում ես քո պարտքը, ապա խմացիր, վոր այդ պարտքը կծանրանա մեջքիդ, ինչպես ջաղացքարը, և գատասատանի որը կզորի քեզ այն անդունդը, վորտեղից լսվում են միայն խուլ հառաջանք և ատամների կրծոց: լով իմացիր, վոր արարի հետ ել կարելի յե խոսել այնպես, ինչպես խոսում են ձեր յերկրի մարդկանց հետասեն գնա, կդնա, յեթէ համոզվի, վոր պետք եղնալ»:

Այս մտքերը և նման մի շարք խոհեր բավական ժամանակ զրադեցրին Վահիդի ուղեղը, սակայն ուղարի կարուղ միշտ ներկա յեր այնուեղ, վորպես կենարունական խնդիր, վորի վճիռը շարունակ հետաձգվում եր: Գրավող բանակի տեսքը և նրա բռնի ուժի զիտակցությունը նրան ներշնչում եյին բազմազան մըռքեր: Հենց այն միտքը, վոր սավառնակով կարելի յե խուզարկել անապատը, և նրա ամենահեռավոր անկյունները, վոր անձի սրընթաց կառքերով հնարավոր եարա-

1) Լոխման հաքիմ - արար իմաստան և տառկախու:

բական նժույզից ել արագ սլանալ և հետապնդել պաղերին, ստիպում եր նրան անդրադառնալ և կշռել այդ բոլոր հնարավորությունները: «Զնամ՝ մարդուք սրանց մեծ սահիբի մտտ, հայտնեմ ինձ պատահած դժբախտության մասին և խնդրեմ»... Այսուեղ միտքը կանգ եր առնում, ընդհատվելով դաժան սպայի մտրակի ոուր հիշողությունից:

III

ՅԵՒԹԱՍՊԱՅԻ ԲՐԱԽՑՔԸ

Վահիդը քայլում եր աննպատակ՝ ծուռ ու մոռ փողոցներով և չնկատեց, թէ ինչպես հասով մի այլ հրապարակ, ուր կանգնած եր յերկհարկանի մի շենք, վորի վրա այժմ ծածանվում եր մի անծանոթ դրոշակ, առանց կիսալուսնի և ասողի, յեռադույն, խաչածեանկյունով: Մի խումբ արարներ հավաքված դիտում եյին դրոշակը և ցած ձայնով խոսակցում եյին:

— Ասլամ-ալի՛յում, — վողջունեց Վահիդը:

— Ալեյքում-սալամ, պատասխանեցին նրան:

— Սա ո՞ւմ պարատն է, — հարցրեց նա:

— Այսուեղ նստում է ինդիկների մեծ սահիբը²⁾:

Ենքի մուտքը պաշտպանում եյին յերկու պահաներ, իոկ մի այլ զինվորական կոմպնած դռան շեմքին, ծխամորը ըերանին և ձեռները հենած կողքերին, խոժու նայում եր խմբված արարներին, ծխի քուլ բաց թողնելով. դա մի հաղթահասակ անլաներ բաց թողնելով, չեկ և կարճ բեխերով, գլխացի յեր, կարմրած զեմքով, չեկ և կարճ բեխերով, թեկ վրա ուներ սերժանտի³⁾ յեռագիծ սպիտակ նշան, ումբին կոլոնիալ³⁾ կլոր զեղնագույն գլխարկ: Մի յերկար շորք գունավոր ժապավենի փոքրիկ կտորներ, կար-

1) Արարերն նշանակում «տեր»:

2) Յենթասպա:

3) Կոլոնիալ - զաղութային մի տեսակ զինվորական զվարեկ վոր գործ են ածում սպիտաքար զաղութաներում, առք յերկրներում:



ված նշանազգեստի թևի վրա, ցույց եյին տալիս նրա ծառայության տարիների քանակը, վորի մեծ մասը նա անց եր կացրել գաղութային յերկրներում՝ Հընդկաստանում և Հարավային Չինաստանում, ձեռք բերելով բոռնչքի և մտրակի գործածության փորձառությունը, կիրառելով մեծ-բրիտանական քաղաքակրթության «բարձր սկզբունքները» և անխախտ պահելով «նորին մեծության» կառավարության¹⁾ «աշխարհասասան» պրեստիժը:

Այժմ նա կանգնած պահպանում եր նույն «սկզբ-բունքների» ներկայացուցչի կայանը և նրա վրա ծածանվող գրոշակի «պատիվը», ինչպես սպանդանոցի շուն, վոր պատրաստ եր գործի դնելու ատամները, յերբ իր վոսկորին վտանգ և սպառնում:

Յերեսում եր, վոր ներկաներից մի քանի արար քիչ առաջ ականատես եյին յեղել անգլիացի սպայի մըտրակի առաջ բերած խուճապին։ Մի բարձրահասկ քաղաքացի պատմում եր սեւըք։ Մյուսները լուս լուս եյին և թափահարու՞ ոլորիները։

— Ինչո՞ւ յեն ծեծում, — ասաց մի ծերունի. նույնիսկ կենդանիներն ել իրենց պատիվն ունեն։ Իսկ մենք հո մարդիկ ենք, մեր սեփական հողի վրա, ուրիշի հողը չենք զավթել, ապրում ենք մեր քրտինքի վաստակով, հեռու մեզնից ոտարի շառը։

— Ճշմարիտ ե, ով իմաստուն սեյիդ Արդուլլահիրն-Ռմար, խոսեց մի այլ ծերունի. յեթե այս անհավատները կարծում են, վոր գործ ունեն անասունների հետ, չափազանց սխալվում են, վորովհետեւ այն ժամանակ, յերբ մեր պապերը տարածում եյին դիտության լույսը ամբողջ աշխարհում, ուսումնասիրում եյին ալզերան և բժշկությունը, թարգմանում Պատոնը և Արիստոտելը²⁾, այն ժամանակ, ասում եմ, սրանք գեռ վայրենիներ եյին և թափառական կյանք եյին վառում։

Ավելի յերիտասարդները ուշադիր, զարմանքով և

1) Անգլիայի։

2) Հույն գիլիսոփաներ։

խօրին ակնածությամբ լսում եյին ծերունիների խոսքերը։

Հանկարծ լսվեց թնդանոթի խուլ վորոտ, մի քանի սավառնակ շտապ գոռացին և արագ պոտոյներ սկսեցին գործել քաղաքի վրա։ Հրապարակը լցվեց մարդկանցով։ Խոնվող բազմությունն արդեն սկսել եր խուճապի մատնվել։ Գալառապես շենքից դուրս յեկան մի խումբ զինվորներ և յերկու շարք կանգնեցին զուանառաջ, մեզ ծանոթ յենթասպայի ղեկավարությամբ։

Թնդանոթի վորոտը հեռվից եր գալիս։ Վահեղը թեև սուր ականջ ուներ, սակայն ավելի ստույդ տեղեկություն ստանալու համար քաշվեց հրապարակի մի աղատ անկյուն, պառկեց գետնի վրա, ականջը փակցրեց հողին և սկսեց լսել...

— Նամազի¹⁾ լավ ժամանակ ես դաել, մարդ ասածու, — ասաց մի անցորդ ծիծաղելով և կանգ տոնելով։

— Բաղդադի կողմից ե, Տիգրիսի ափերի մոտերքից, — բարձրաձայն ասաց Վահեղը։ Նա ականջը հեռացրեց գետնից, բայց պառկած մնաց։ Տեսնելով իր մոտ կանգնած մարդուն, վոր ապշած նայում եր իրեն, ժամանակ և միրուքը չոյելով ասաց։

— Նամազ վերջացրի, հերթը քոնն ե, պառկիր գետնի վրա և կլսես չեյթանի խոհանոցի պղինձների հանած աղմուկը։

— Ասում ես՝ բաղդադի կողմից ե։

— Բաղդադի կողմից...

— Վեր կաց, վոտների տակ կտրորեն, չե՞ս տեսնում...

Իրարանցումը հրապարակում սաստկանում եր։ Լսվում եր քաղաքային մունետիկի ձայնը, վոր հրավիրում եր քաղաքացիներին քաշվել տները և չանչանգրատանալ։

— Մեծ սահիբի հրամանով, ծեր ու յերիտասարդ, կին ու յերեխա, բոլորը անխտիր վախ չունենաք, բան

1) Սղոթք։

չկա, վտանդ չկա... Ով գտել ե, հինգ արծաթ բաշ-
խիչ... Յա ալլա՛Հ...

Շատերը չեյին նկատում, վոր ծեր մունետիկը,
վոր սովորաբար կորած ավանակներ գտնելու համար
Հրապարակային հայտարարություններ եր անում, այս
անդամ ել մեքենայորեն կրկնում եր իր համբառենական
հանգերգը— «ո՞վ գտել ե, այսքան զուրուշ բաշխէ»։
Թեև վոչ մի ավանակ չեր կորել, բացի Մուհիղ-ելՎա-
հիդի ուղտից, և վոչ վոք չեր խնդրել ծերունի մունե-
տիկին կորած եշի մասին կանչել¹⁾, սակայն ծերուկը
յերկար տարիների ընթացքում սովորել եր միշտ նույն
խոռքերը կրկնել և այսորվա արտասովոր հայտարա-
րությունը անելիս՝ անդիտակցաբար կցում եր սովո-
րական վերջաբանը։

Ամբոխը ուշադրություն չեր դարձնում մունետիկի
տարորինակ և անկապ հայտարարության բովանդա-
կության վրա, վորին նա նույնպես սովոր եր, սակայն
Վահիդը լսելով հայտարարությունը, ցնցվեց, վեր թը-
ռայ պատկած տեղից և, ճեղքելով մարդկանց խիտ
շարքերը, մոտեցավ մունետիկին։ Վերջինս կրկնում եր
նույն հայտարարությունը և վերջին բառերը՝ «ով զը-
տել ե, և այլն», յերբ Վահիդը բռնեց նրա ձեռքը և
սկսեց ամուր թափ տալ։

— Կանչի՛ր, կանչի՛ր, ձայնդ անսպառ, կորածը իմ
ուզան ե, այս գիշեր գողացան անզգամները, տաս ար-
ծաթ տուր, տասնհինդ, քանան... Ուղտս նշան ունի, մի
աչքը կույր, մազը մուզ-դեղին, ճիշտ իննը տարե-
կան...

Վահիդը այնքան բարձր եր ճում, վոր մի բոպե
դրավեց շիոթված ամբոխի ուշադրությունը։ Սկսեցին
համաքվել մունետիկի և Վահիդի շուրջը, հեռացնողնե-
րը յետ եյին գալիս, հետեւելով մեկ-մեկի որինակին։
Միականի ծերուկը դրավել եր բոլորի ուշադրությու-

1) Արեւելում կորած կենդանիները գտնելու համար հրապարակներում
մունետիկը բարձր ձայնով կանչում եւ հայտարարում, գանողին վարձարու-
թյուն խռառանալով։

նը, մոռացել եյին ողում սավառնող գիվային թռչուն-
ները, թնդանոթի վորատը, սահիբի պաշտոնատան վար-
ձածանվող դրոշը և նրան պահպանող զինվորների
շարքը։

Վահիդը շարունակում եր բարձր ձայնով նկարա-
գրել կորած ուղտը և իրեն պատահած դժբախտու-
թյունը։ Երջապատող բազմությունը լուր լսում եր և
կարեկցում խեղճ Վահիդին, վորի վիշտը միայն ճշմա-
րիտ արարը կարող եր զգալ իր հոգու խորքում։

Եերբ Վահիդը վերջացրեց իր պատմությունը,
մունետիկը բարձրացրեց իր ձեռնափայտը բազմության
դլուխներից վեր և այս անդամ հետեւյալ կերպով ձե-
մակերպեց իր հայտարարությունը։

— Սահիբի հրամանով, կորել է մեկ ուղտ, մեկ աչ-
քը մնամաւծ։ մուսուլմաններ, մեկ ուղտ, վախ չունե-
նաք, հեյ, վտանդ չկա, մեկ ուղտ, գտնողին քսան ար-
ծաթ... քսան արծաթ...։

Բազմությունը տեղից չեր շարժվում։ Հեռվեց լրա-
վում եյին խառնիխուռն ձայներ, ծիծաղ, հիշոց և սու-
լոց։ Մունետիկի հայտարարությունը այս անդամ ու-
շադրություն գրավեց իր ել ավելի տարբորինակ ու ահ-
կապ բովանդակությամբ։

— Գիվել և հիմար ծերուկը։

— Վախից խելքը թուել ե:

— Հարբած ե, գուցի։

— Զերմ ունի, զառանցում ե:

— Հո՛ւ, Հո՛ւ, Հո՛ւ...

Հանկարծ ամբողջ հրապարակը թնդաց նման բա-
ցականչություններով— բոլորը անխուիր սկսեցին
«Հո՛ւ, Հո՛ւ» կանչել, շատերը առանց իմանալու, թե
բանն ինչումն ե։ Եերեխաները հետեւում եյին մեծերի
որինակին և իրենց սուր ճիշերով ճեղքում ողք։ Կառու-
ների վրա կանդիած կանայք, փաթաթված ուն շղարշ-
ների մեջ, քիչ եր մնացել միանային տղամարդկանց
հարայհրոցին, սակայն մնացին քարացած, յերբ իրենց
բարձրությունից նկատեցին, վոր յերկհարկանի շենքի

առաջ շարված անգլիական ջոկատը՝ հրացանները “ու-սին՝ սկսեց առաջանալ դեպի ամբոխը և յենթասպայի հրամանի համաձայն՝ զինվորները հրացանները ուսուի վար առնելով՝ սկսեցին փամփուշաներ լցնել:

Հանկարծ կտուրներից լսվեց կանաց սուր ճիչը և շարագուշակ կերպով ճեղքեց ողը: Իրողությունը անսպառ եր և անակնկալ: Հրապարակի բազմությունը, կարծես ելեքտրական ուժեղ հոսանքից շանթահար՝ մեխիք տեղնուտեղը, անմոռւնչ: Միայն լսվաւմ եր դեռ մունետիկի զիլ ձայնը, վորի վերջին բառերն ել սառեցին՝ անակնկալ կերպով ելեքտրականացած մըթնոլորտում...

— Քսան արծաթ, ով մուսուլմաններ, քսան արծաթ, գտնողին քսան արծաթ...

— Փախեք, կրակում են, փախեեեք...

Ստկայն վոչ վոք տեղից չեր շարժվում: Ամբոխի դիրքը սպառնալից եր: Ամենքը զգում եյին, վոր վոչ մի վատ բան չեն արել. այդ գիտակցությունը վրդովում եր նրանց հոգին և լցնում այն արդար զայրութով: Մի՞թե իրենք ազատ չեն զվարճանալու իրենց հայրենի քաղաքի հրապարակում, վայելելու իրենց հանգստյան որը, ուրբաթը, այնպես, ինչպես իրենց հաճելի յե: Ինչո՞ւ յեն յեկել այս ոտարազդիները, անկոչ հյուրերի պես, և Կառասում են հյուրասիրության տարրական կանոնները, քիչ առաջ մտրակով, իսկ այժմ մահացու հրացանով:

Զինվորների ջոկատը վարանեց, տեսնելով ամբոխի սպառնական դիրքը և քար լուսիթյունը: Յենթասպան ձեռքը բարձրացրեց ողի մեջ և ինչ վոր բան ասաց անդիմերեն. մէլ յերիտասարդ, թրքական Փեսը գլխին, թարգմանեց նրանց խոռքերը.

— Սահիբը հրամայում ե անմիջապես ցրվել, իսկ վաղ առավոտ, սովորականի պես բաց անել չուկան և անցնել խաղաղ աշխատանքի. չհնազանդվողները կենթարկվեն ամենախիստ պատիժների, նույնիսկ կախաղանի:

Յերկհարկանի շենքի պատշգամբի դուռը բացվեց և մի անգլիացի կարձլիկ զինվորական, գեներալի ուսուոցներով և ալեխառն մազերով գուրս յեկավ զիտելու հրապարակը: Ամենքի հայացքը մի պահ ուղղվեց գեսլի պատշգամբը: Մեր գեներալը սպասում եր, վոր ժողովուրդը կողջունե իր յելույթը, և պատրաստվել եր պատշաճ կերպով պատասխանելու ամբոխի խանգավառ ցույցերին և ովացիաներին:

Թարգմանը շարունակում եր.

— Սահիբը հայտնում ե նույնպես, վոր անգլիացիների հզոր փաղիչահը¹⁾ հրապատ զավակների պիս սիրում ե իր հապատակներին և հույս ունի, վոր իր հրապատակները և հովանավորած ազգությունները անկեղծ վորդիական զգացմունքներով տոգորված են գեպի նորին մեծության գահը, վորի հզորությունը հայտնի յե ամբողջ աշխարհին:

Ամբոխը անմոռւնչ լսում եր թարգմանի խոսքերը, և յերբ սա վերջացրեց, կամաց-կամաց սկսեց ցրվել, լուս և անշշուկ: Մեր գեներալը տեսնելով, վոր ժողովուրդը անուշադիր թողեց իր նշանավոր և պատկառելի անձը, զժգոհ հեռացավ, պատշգամբի գուրը յետելց ամուր շրիկացնելով:

Հրապարակը համարյա դատարկվել եր, կանայքնույն պես հեռացել եյին կտուրներից իրենց ամուսիններին դիմավորելու համար: Մունետիկի ձայնը այլևս չեր լսվում, սակայն նա մնացել եր կանգնած հրապարակի կենտրոնում Վահիդի հետ: Վերջինս իրանը ծռած հարցական նշանի պես՝ նայում եր նրան և քթի տակից մըմոռում եր՝ «ալլահ, մի՞թե ամեն ինչ կորած ե, մի՞թե իմ սիրեցյալ Արդին գտնելու վոչ մի հնար չկա»:

1) Պագավարը.

Զինվորների ջոկատը պետի հրամանով վերաբեր-
ձել եր կայսերը: Յենթասպան մի քանի հրամաններ
տալուց հետո կրկին գրավել եր իր դիրքը՝ շենքի դռան
առաջ, և շարունակում եր ծխել իր ծխամորճը հան-
դարտ և անայլայլ:

— Պիտի զնամ մեծ սահիբի մոտ և բողոքեմ, բար-
ձըր և վճռական ձայնով ասաց Վահիդը:

Մունետիկը գլուխը թափահարեց և կարծես ինքն
իրեն՝ խոսեց:

— Այսոր յերեխաներս հաց չունեն, ո՞վ պետք և
վճարի իմ վարձը:

Վահիդը ձեռքը տարավ դեպի գոտին, ուր պահ-
ված եր քսակը, հանեց մեկ արծաթ, գրավ ծերունի
մունետիկի ափի մեջ և առանց յետ նայելու հաստատ-
քայլերով առաջացավ դեպի յերկհարկանի շենքը:
Հասնելով դռան մոտ՝ նա մի պահ վարանեց, տեսնե-
լով շեմքի վրա անշարժ կանգնած յենթասպային, վոր
ձեռները դարսած մեջքին՝ ընդունել եր սպասողական
դիրք:

Վահիդը հիշեց թարգմանի խոսքերը՝ «անդիմացի-
ների հզոր փաղիշահը հարազատ զավակների պես սի-
րում ե իր հպատակներին», — սիրու առավ և խոսքը
ուղղելով յենթասպային և մի ձեռքը բարձրացնելով
դեպի պատշգամբը՝ ասաց.

Սահիբի քերի¹⁾) —, խնդիրք ունեմ:

Սերժանտը նախ դեմքը խոժուեց, հետո դիտելով
մանրազնին Վահիդի արտաքինը, խորշոմազատ արե-
վավառ դեմքը, վորի վրա անսովոր փայլով կայծկրլ-
տում եր միակ աչքը, ալեխառն միրուքը, վոր կիսով
չափ ծածկում եր բաց կուրծքը՝ ժպտաց և աջ բռնեց-
քը սեղմելով՝ առամների միջից մթմթաց.

— Come on!²⁾ու ձեռքով մոտենալու նշան արավ:

Վահիդը մի պահ տատանվեց, զնա³⁾, թե վոչ: Մինչ
նա վարանում եր, սերժանտի ուղեղում մի միտք ծա-



1) Մհծ տերէ

2) Թէ, որի (անգլ.):

գեց, մի զվարճալի միտք, հենց այնպես, մի փոքրիկ կատակի ծրագիր, փարատելու համար գաղութային նվաճման ծանր տաղտուկը:

Վահիդը մոտեցավ: Սերժանտը տեղից չշարժվեց: Մի պահ նրանց հայացքները հանդիպեցին: Անդիացին դեռ ժպտում եր, սակայն ճանապարհ չեր տալիս: Վահիդը ձեռքի շարժումով հասկացրեց, վոր ուղում և մտնել: Անդիացին նույնպես ձեռքի շարժում արագ կարծես ուղում եր ճանապարհ տալ, բայց այդ շարժումը ունեցավ անսպասելի հետևանք: Հանկարծ Վահիդը զգաց, վոր աչքերը մթնում են, կորցնում և վոտքի տակի հողը և ինչ-վոր աննպատակ պտույտներ և դործում ողի մեջ: Այս բոլորը կատարվեց մի քանի ակնոթարթում, և Վահիդը ոետինե գնդակի պես կանոնավոր վոտյուններով գնաց թավալելու չորս-հինգ քայլ հեռու հրապարակի փոշիների մեջ... Ո՛, խեղճ Վահիդը գեռ չդիտեր ինչ ասել և բռքս...

Իսկ անդիացին հաստատելով իր անվրեպ հարվածը և բուռնցքի անորինակ ուժը, բռնվեց անզուսադ հըրծվանքով. նա ծիծաղում եր թոքերի ամբողջ ուժով և ձեռներով ամուր սեղմում եր կողերը, վոր ցնցումից չպայթի...

IV

«ՍՈՒՐԲ» ՄԱՐԴԿԱՆՑ ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՈՒՂՏԾԻ ՈՐՀԱՍՏԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներկա պատմությունը ամբողջացնելու համար կարեօր և պատմել յերեք անձանոթ գերվիճերի և դժբախտ Մուհիդ-էլ-Վահիդի սիրեցյալ ուղտի մասին ել:

Յերեքը հավատացյալ և բարեպաշտ ուխտավորները (վորոնց քունը ավելի քան կասկածելի յեր) ծիչտ կես գիշերին վեր կացան և ստուգելով, վոր Վահիդը խոր քնածե, անշուկ արձակեցին ուղտի կապը, թեթե

թեալ ամբացրին սապատին, արարին հատուկ վարպետությամբ վոտքի հանեցին թմրած անասունին և յետեներից քաշելով անազմուկ հեռացան Բարելոնի ավերակներից: Յերբ ազատվեցին խորդ ու բորդ վլատակներից՝ քայլերը արացրին: Նրանք մտադրել եյին մինչեւ լուսաբաց կտրել այնքան տարածություն, վոր ամեն մի հետապնդում անհնար լիներ:

Յերբ գիշերը մոտեցավ իր վախճանին և հորիզոնը սկսեց շառագունել, մեր «Հավատացյալ» և «բարեպաշտ» ուխտավորները իրենց ավարի հետ միապին հասան մի ոազիս, վոր ավելի ծիչտ կարելի յե անվանել արմավենիների պուրակ, վորի նմաններին հաճախ կարելի յե հանդիպել իրաքում, մանավանդ Տիգրիս և Դիալա գետերի ափերին:

Այսաեղ նրանք վորոշեցին մի քիչ շունչ առնել՝ անգաղար յերթից հոգնած:

Արեւ արդեն սկսել եր լուսավորել ծառերի կատարները, քիչ հետո, հանկարծ, գնդակի պես գուրս թռավ հորիզոնից (միշտ այդպես և լինում տափաստաններում, ուր բարձրություններ և սարեր չկան):

Դերվիշները կանգ առան և, տեսնելով արևի ծագումը, գարձան գեպի հարավ և սկսեցին մրժնջալ առավոտյան աղոթքը՝ իրենց յերկար միրուքները ծանր-ծանր շուշելով:

Մինչ զբաղված եյին այս բարեպաշտ արարազությամբ, նրանցից մեկի հայացքը, սովորականից մի քիչ ավելի սեեռուն և ուշադիր, ընկավ ուղտին, հատկապես նրա գլխի և զեմքի վրա:

— Անե՛ծք շեյթանին, խարվեցինք. ուղտի մեկ աչքը կույր և, ինքն ել զառամած, մթության մեջ չենք նկատել:

Այս խոսքերը արտասանվեցին այնպիսի տռնով, վորի մեջ զգացվում եր հիասթափություն՝ խառն ափսոսանքի և կատաղության հետ:

Աղոթքը սառեց մյուսների շրթումքներին և ձեռները անշարժացան միրուքների վրա:

Այս անակնելով և ցալալի հայտնությունը պատկանում էր յերեք պատկառելի կրոնավորներից նրան՝ վորի ձեռքում գտնվում եր ուղարի վզկապը։ Թոկը բավական յերկար էր, վորով ուղար հնարավորություն ուներ ազատ շարժումներ անելու և պահելու վորոշ տարածություն իր և իրեն առաջնորդի միջև։

Ստուգելու համար տիրուք իրողությունը մոտեցան և հաստատեցին անհերքելի փաստը։

— Ալլա՛հ, ալլա՛հ, ինչի՞ յե պետք տիր քավթառ ու ծուռումուռ կենդանին. գրագ եմ գալիս, վոր գրան քսան արծաթ ել չեն տա, խոսեց մեզ ծանոթ կոկորդային ձայնը, վորը պատկանում էր խմբի ավագ Մուսթաֆա Նուրեդդին-ել-Մանսուրին։

Ու բոլորը միաբերան սկսեցին անիծել իրենց բազգը և հայհոյել ուղարին ու նրա տիրոջը, կարծես թե վերջիններս եյին պատճառը իրենց անազողության։

Ուղար կարծես հասկանում էր բանի եյությունը. նրա տհաճությունը սկսում էր փոխվել անհանգստության։ Բնազդաբար նա զգում էր, վոր գործ ունի զեպի իրեն թշնամաբար տրամադրված ոտարականների հետ, սակայն թշնամության բուն պատճառը չեր կարող զուշկել։ Վահիգը նրա հետ միշտ քաղցրությամբ եր վարդում, չեր հայհոյում, չեր բզավում, խոսում եր մեղմ և փաղաքող ձայնով, խակ այժմ... այժմ նրա առջև կանգնած եյին յերեք անծանոթ և դաժան զեմքեր, փրփրած բերաններով և չարությունից փայլատակող աչքերով։

Աբդին իր առաձգական յերկար վիզը գալարեց, կակուղ թաթերը մեկ-մեկ բարձրացրեց զետնից, փոքրիկ ականջները շարժեց և կարճ պոչը վոլորեց. թվում էր, ինչ-վոր բան անհանգստացնում էր կենդանուն։ Շատ հավանական է, վոր նրա սապատը քերվում էր, իսկ ով գիտե, սապատ քերելը հեշտ բան չե ուղարի համար։ Հանկարծ նա բերանը բաց ու խուփ արտի և կոկորդից արձակեց մի խուլ մոնչյուն. մեծ քանակությամբ թուքեր հավաքվելնրա բերնում. լորձունքի տյդ պատկառելի քանակությունը նա վերածեց մի խոշոր



գնդի և մեկեն շառաջունով շպրտեց յերեք դադապած գերվիշների վրա։ Լորձունքի գնդակը վորպես շրապնել պայմանեց մարդարեյի հետևորդների գլուխների վրա և վողողեց նրանց պատկառելի դեմքերն ու նվիրական միրուքները։

Դերվիշները մոնչացին գազանի պես. լպրծուն հեղուկը համարյա կուրացրել եր նրանցից մեկի տչքերը, այն մեկի, վորին անվանում եյին Մուստաֆա-Նորեդդին-ել-Մանսուր։

Հաստ ձեռնափայտերը շարժվեցին ողի մեջ, սակայն նտխքան սրանց նպատակին ծառայելը, ուղտը մի քարձը թոփչք գործեց, դարձավ ինքն իր վրա և յետեի վոները գետնից կտրելով՝ յետ մղեց վճռական գրուը։

Ճակատամարտը կարճ տեղոց. ուղտը ուղղելով վերջին հարվածը դերվիշներից մեկի վորին, իր ծեր սրունքների ամբողջ ուժովը սլացավ դեպի անտպատի խորքերը։

Այն մեկը, վոր ստացել եր վերջին հարվածը, այժմ անշունչ փոված եր գետնի վրա, իսկ մյուս յերկուսը, վորոնց մարմնի զանազան մասերի վրա դեռ թարմ եյին ուղտի թաթի հետքերը, կատարելապես ապշած և շփոթված անակնկալ և ըստ յերեսութին հիմար դեպքից, չգիտեյին ինչ անել—հետեւել փախչող ուղտին, թե հասնել իրենց ուշաթափ ընկերոջ ողնության։

V

ԵԼ ՎԱՀԻԴԻ ՎԱԽԱՇԱՆԸ ՅԵՎ ՊԱՏՄՎԱԾՔԻ ՎԵՐՋԸ

Մենք ուղտապան ել-Վահիդին թողինք թափալված փոշիների մեջ, արաբական յետընկած փոքր քաղաքի հրապարակում, ուր նվաճողները կախ եյին ավել Մեծ-Բրիտանիայի դրոշակը և վորի հովանու տակ անզուսպ հրճվում եր գաղութային յերկարամյա ծառայության համար վարձատրված վարձական սերժան-

ալ, տեսնելով իր բոռունցքի անորինակ ուժի հետեւալով։

Ճշմարիտ է, անգլիացի սերժանտի բռունցքի հարվածի պատճառած ցավը յերկար չտեսեց. Վահիդը մի կերպ քաշ գոլով հասով իրեն ծանոթ Արբասի քարվանսարան, սակայն դա տակնությա արավ նրա վողջ եյությունը և առիթ յեղավ, վոր նա տանջվի հոգեպես։ Նա չեր կարողանում մոռանալ անգլիացու անզուսպ ծիծաղը, վոր նրան դիվային եր թվում։ Իր նահապետական և պարզ հոգով նա չեր կարողանում գտնել այդ անսանձ հրճվանքի պատճառը. Խփեց՝ բավական չե, այժմ ել ծիծաղում է. ինչո՞ւ, ինչո՞ւ։ Միթե մարդկային հիմարությունը կարող է հասնել այն աստիճանին, վոր ուրիշի տանջանքը հըրծավանքի աղբյուր դառնա։ «Ալլահ, ալլահ, ասում եր մտքում, տեսնում եմ, վոր քո ստեղծած բաները այնքան ել ինելոք չեն. թող չնից ել վատթար լինեմ, միայն չլսեմ մարդու ծիծաղը մարդու դժբախտության վրա. հատկապես այն դժբախտության, վորի պատճառը հենց ինքն ե»։

Նախորդ գիշերվանից ի վեր վոչինչ չեր կերել, ամբողջ որը թափառել եր և վերջին անգամ ստացել մի բռունցքի հարված, իսկ յերեկոյան Վահիդը ընկայ տենդի մեջ։ Քարվանսարայի տերը, վաղեմի ծանոթ Արբասի, հաճախ գալիս եր նրան ինամելու և դիշերված մեծ մասը անց կացրեց նրա կողքին։

Վահիդը սկսեց զառանցել, տաքությունը գնալով սաստիանում եր։

— Մարդարեյի անունով յերգվեցին, Մեքքեյից ենք դալիս, ասացին, մենք—մեծ անտպատի թափուական դերվիշներուքարողում ենք աստծո խոռքը. . . հետո դողացան իմ Արդուն. . . Յա հա՛քի, խաբեցին. . . իսկ դժոխքի թոշունը գոռում է մեր դաշտերի վրա. . . Մեծ ստհիրը ծիծաղեց, յերբ իմացավ, վոր ուղտը կորել ե. . . ասաց՝ միրուքը տծելիք, ուղտը կդտնեմ. . . Բաղդադում մի տուն կա, այնտեղ հաշիչ եյին ծիտում. . . ասակ՝

Բազգադը լավ քաղաք ե, մենք չուսով կտիրենք
նրան... Մի չարչարեք իմ ուղտիս, նա այսոր շատ ե
հոգնել... Խեղճ Արդի, խեղճ Արդի...

Մի քանի որ Վահիդը տանջվեց տենդի մեջ, Հին-
գերորդ որը զաղաղարեց զառանցելուց, ընկավ մի տեսակ
ինքնամոռացման, ավելի շուտ անզգայության մեջ։ Սա-
կայն կես գիշերին հանկարծ սթավիվեց, նստեց անկողնի
մեջ և աչքերը լայն-լայն բաց անելով՝ սկսեց խոսել
Արքասի հետ, վոր այդ ըոպեյին յերկա յեր։

Թվում եր, վոր տենդը անցել եւ նրա միաբը դոր-
ծում և սովորական պայծառությամբ։

— Միրելի Արքաս, զգում եմ, վոր վերջին ժամո
հասել ե. գնա և բեր ինձ մի բաժակ շերբեթ, վերջին
անդամ ուղում եմ ճաշակել յերկրային քաղցրությունը։

Արքասը շտապեց կտտարել մահամերձի յանկու-
թյունը։

Բաժակը դատարկելուց հետո Վահիդը առայ.

— Ծնորհակալ եմ հայիտյան, ով աննման Արքաս,
թող որհնվի քո արհեստը և աշխատանքը, վորովհետեւ
աշխարհիս վրա չկա ավելի քաղցր բան, քան արդար
քրտինքի վաստակը, անիծվեն անորենները և ուրիշի
աշխատանքի պտուղը խլող հափշտակիչները...

Լուսաբացին, յերբ քարվանսարայում գիշերող կտ-
րավանը զանգակների ուրախ ձայնի ընկերակցությամբ
դուրս յեկավ լայն դարպասից, ուղղվելով դեպի լայ-
նարձակ հորիզոնը, ուղտապան Մուհիդ-ել-Վահիդը
նույն այն խաղաղ և անվրդով քնով, վորից ոյլես չեն
զարթնում...

Արևելքում անծայրածիր տափաստանի հորիզոնից
բարձրանում եր նորածագ արևելը...

Մուհիդ-ել-Վահիդի հայրենիքը վազուց արդեն
գրավված եր անդլիական զորքերի կողմից, վորոնց մեծ

մասը սպահիներ¹) եյին։ «Եորին մեծության» իշխա-
նությունը տարածվել եր ամբողջ Միջագետքի վրա։
Սակայն ժողովրդի ցասումն արտահայտվում եր հա-
ճախակի ապստամբություններով։ Նա հեշտությամբ
չեր տանում ճնշողի լուծը։

Մի որ գավառական նույն վոքրիկ քաղաքի հրա-
պարակում, ուր գտնվում եր մեզ ծանոթ յերկհարկանի
շենքը (վորի վրա զեռ կախված եր բրիտանական դրո-
շակը). հայտնիեց մի ուղտ՝ բուրդը գզզզված, ուժա-
սումառ, գրեթե կմախքացած, խեղճը հաղիկ շարժվում
եր յերկար սրունքների վրա և մերթ ընդ մերթ
արձակում կոկորդային խուլ կատաղի մոնչյուններ։

Դա ել-Վահիդի կորած ուղտն եր։

1927 թ.



Աղամին հոգիկ գինուր

Դատ. Խմբագիր՝ Հք. Թոչար
Տեխ. Խմբագիր՝ Ստ. Ալբունյան
Արրաջըիչ՝ Մ. Փարսադոնյան

Գլազվիսի լիազոր՝ Կ. 4719 Հըստ. 4296.
Պատվիր 1142. Տիւաժ 5090.
Ինչպէս 62×94. Տպագրական 2 $\frac{1}{4}$ մամուլ.
Ենէ մամուլում 30720 նիշ. Հեղինակային 1 $\frac{3}{4}$ մամ.
Հանձնված է արտադրության 21/IX—1937
Առողագրված է տպագրության 17/XII 1937
Գինը 85 կղ.

04



70
9465 854.



В. ТЕРЗИБАШЯН
ПРИКЛЮЧЕНИЕ ЕЛ ВАИДА
ГИЗ, ССР АРМ. ЕРЕВАН